

թի Շէրիֆ) առ դատաւորն երուսաղէմի, դադարիլ Լատինաց 'ի բռնութենէ. հաստատել զիրաւունս Հայոց. կախել վերստին զկանթեղս և դնել զաշտանակս, և կատարել զհոգեւոր պաշտօնս ըստ սովորութեան, որպէս յայտառենն Արքունի հրովարտակք. 'ի \ Մուհարրէմ, \ ԿԿ (1615) : Ի ժամանել հրովարտակին եւ յընթեռնուլ զայն 'ի դատարանի, լռեցին Լատինք առ ժամն 'ի հակառակութենէ, եւ թոյլ ետուն Հայոց կատարել զպաշտօնս իւրեանց : Սակայն յարուցին զայլ իմն վէճ 'ի տաճարին Ս. Յարութեան : Գանգի եղեալ էին 'ի մօր միայն ինքեանց սեփհականել զՊատանաւորին Գրիստոսի. և բռնացեալ 'ի վերայ Հայոց և Յունաց՝ ոչ տային թոյլ լուցանել զմոմեղէնս աշտանակաց՝ որ անդ. և զի կարի դժուարին էր երկուց ազգաց 'ի միում նուագի կորուսանել զիրաւունս իւրեանց. ուստի ոչ ետուն տեղի բանից Լատինաց, այլ վարէին ըստ առաջին սովորութեան : Իբրեւ տեսին Լատինք թէ՛ ոչ կարացին վանել զընդդիմութիւնս Հայոց և Յունաց. ազդարարին հիւպատոսին Գաղղիոյ, որ նստէր յայնժամ 'ի Բերիս. և նա գրեալ ծանոյց 'ի Գուռն, թէ Պատանաւորին օրինաւոր մուրհակօք սեփհական լեալ իցէ Լատինաց. և նոցա է լուցանել զմոմեղէնս աշտանակաց յաւուր Ուրբաթու ըստ նախնի սովորութեան. և խնդրեաց բառնալ զընդդիմութիւնս այլոց քրիստոնէից : Գրեցաւ հրովարտակ վասն այսր. և յետ ոչ բազում աւուրց եհաս յերուսաղէմ. առեալ զայն փոխանորդին Լատինաց՝ չոքաւ 'ի դատարան, և խնդրեաց 'ի դատաւորէն կոչել զգլխաւորս քրիստոնէից. և առաջի բազմութեան ընթեռնուլ զհրովարտակն : Եւ յետ կատարելոյ զամենայնն, եհարց դատաւորն ցժողովեալ բազմութիւնն, և ասէ՝ այդարեւ տեղին այն միայն ազգին Լատինաց իցէ սեփհական. և նոքա ետուն պատասխանի, և ոչ միոյ ազգի. այլ ամենեցուն հաւասար և ընկերութեամբ է տեղին այն, որպիսիք են Հայք, Յոյնք, Լատինք, Վիրք, Գալթիք և այլք : Ապա խնդրեաց դատաւորն 'ի փոխանորդէն Լատինաց բերել զայլ վաւերական գրեանս վասն այնր, որովք խոստանային լինել ժառանգորդ տեղւոյն : Սակայն փոխանորդն չունէր զայլ գիրս, և ոչ կարաց իսկ մատուցանել, ուստի սկսաւ զայլ և այլ մնտի սլատառանս յօ-